Պարտեզ ընտանիքում

Ծրագիր 0-6 տարեկանների, ընտանիքների, այլոց համար

Նպատակը՝

0-6 տարեկանների ընտանեկան կրթության կազմակերպում
Ընտանեկան միջավայրի զարգացում. պարտեզ-ընտանիք՝ ամբողջական միջավայր
Ընտանիքի մասնակցությունը ուսումնական ծրագրերի, նախագծերի մշակմանը, իրագործմանը
Քայլերը
Նախապատրաստական աշխատանքներ խումբ-մեյլի, ֆորումի ստեղծում
«Պարտեզ» ամսագրի զարգացում-մշակում ըստ առաջարկվող ծրագրի
Ծնողական ակումբների պարապմունքների գրաֆիկ
Խմբերի ծնողական ակումբների ցուցակների, ծրագրերի կազմում-մշակում ակումբների պարապմունքների ժամանակ
Սաների ընտանեկան միջավայրի ուսումնասիրում

Կազմակերպում

«Պարտեզ» ամսագրի, ֆորումի միջոցով ընտանիք-պարտեզ համատեղ գործունեության կազմակերպում
Ծնողական ակումբների պարապմունքներ
Համատեղ գործունեության նախագծեր
Համատեղ հետազոտական աշխատանքներ, ուսումնասիրություններ
Ծնողը՝ դաստիարակ
համատեղ խոհանոց ծես-ծիսակատարություն ստուգատեսներ

«Պարտեզ» ամսագիր

1. Ուսումնական փաթեթ՝.
Մեդիաընթերցարան
* մանկական
* մասնագիտական
* խորհրդատվական,
* հետազոտական
Խաղադարան
2.Բնագետիկ
3.Զայնադարան
* երգարան
* հեքիաթասաց
4. Մարզական
5. Խոհանոց
6. Ճամփորդություն-հայրենագիտություն
7. Ատամհատիկ
8. Ծրագրային

Ծնողական ժողովի (այսուհետ՝ակումբ-հավաք) կարգ

Նախակրթարանում և 5-6 տարեկանների խմբերում, ըստ կարգի, ծնողը ծանոթ է իրականացվող ծրագրին, նախագծերին, մասնակցում է դրանց իրագործմանը, գիտի

խմբում կամ դասարանում յուրացվող ուսումնական նյութը:
Հավաքները (անձնապես և օնլայն) ընտանեկան կրթության, ծնողի տեղեկացման, քննարկման միջոցներից են:
Հավաքը ուսուցողական ծրագրի (դասարանի, խմբի) սաների ծնողների՝ ծրագրով որոշված հանդիպումն է. սեմինար-պարապմունքներ, ծրագրի իրականացման քննարկում, ծրագրի ուսումնական նյութերի յուրացում, ուսումնական ճամփորդություն, այլ:
Հավաքի նախաձեռնողներ

- դպրոցի ղեկավարը (տնօրեն)
- խմբի ծրագրի ղեկավարը
- ծնողը սանի օրինական ներկայացուցիչը)
- մասնագետը (առողջագետ, հոգեբան, այլ), այլ դասավանդող:

Հանդիպման համակարգողը խմբի ծրագրի ղեկավարն է:

Հավաքի մասնակիցներ

- տնօրեն
- ծնող (ծնողի կողմից երաշխավորված անձ)
- դասավանդող կամ հրավիրված մասնագետ
- սաներ

Հավաքի կազմակերպումը

- Ֆիզիկական (անձնապես)
- օնլայն

Դաստիարակը հավաքի մասին երեք օր առաջ տեղյակ է պահում մասնակիցներին՝ հրավերը և հանդիպման ծրագիրը հրապարակելով խմբի կամ դասարանի բլոգում, դպրոցի ենթակայքում կամ ծնողական ֆորումում:
Ժողովին հրավիրված բոլոր ծնողների և մասնագետների ներկայությունը պարտադիր է:
Մասնակիցներին գրանցում է դասարանի ղեկավարը:
Բացակայելու մասին ծնողները նախօրոք գրավոր տեղեկացնում են ծրագրի ղեկավարին:
Հավաքի գրավոր ամփոփումը պարտադիր է և տեղադրվում է բլոգի ծնողական բաժնում:
Բացակա ծնողը ծանոթանում է ժողովի նյութերին և արձագանքում դրանց:
Ժողովին ծնողի պարբերական բացակայությունը կարող է լինել ուսումնառության պայմանագրի լուծման հիմք:

Հավաքին սան(ներ)ի անհատական ուսումնական գործունեությունը և վարքը, ընտանեկան խնդիրները չեն քննարկվում:
Սանին վերաբերող ցանկացած քննարկում-խորհրդատվություն իրականացվում է միայն անհատական հանդիպման միջոցով:
Անհատական հանդիպման համար ծնողը կամ նախաձեռնողը զանգով կամ օնլայն նախապես ճշտում է հանդիպման օրը, ժամը, վայրը:

Աիդա Պետրոսյան